ՆԵՐԴԱՇՆԱԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԱԹԵՆԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

*Ներդաշնակ կառուցվածքներում արտացոլվում
են կյանքի զարգացման օրինաչափությունները:*
Դմիտրիևա Ն.[1]

Նախնադարյան հասարակարգից մինչ օրս կոմպոզիցիոն հորինվածքներ ստեղծելիս մարդը գիտակցաբար է օգտագործում ծանոթ ձևեր և կառուցվածքներ:

Արարչագործության մեջ առաջնայինը բնությանը հետևելն է, նրան համահունչ և նրա օրենքներին ձայնակցող հորինվածքներ ստեղծելը: Դրանց կարևորագույն հատկանիշը ներդաշնակությունն է, որը տեսողական արվեստներում արտահայտվում է ոսկե հատման համաչափության, ռիթմի, սիմետրիայի, ասիմետրիայի, ստատիկայի, դինամիկայի, նույնության, հակադրության, դոմինանտի ու նաև այլ հատկանիշների միջոցով:

Բանալի բառեր - կոմպոզիցիոն կառուցվածքներ, ներդաշնակություն, կատարելություն, ոսկե հատում, ձևաստեղծման միջոցներ, ռիթմ, սիմետրիա, ասիմետրիա, ստատիկա, դինամիկա, նույնություն, հակադրություն, դոմինանտ:

Օրգանական և անօրգանական աշխարհը բաղկացած է մի քանի պարզագույն ձևերի անսահման համակցումներից: Օրինակ՝ պարույրը, *գունդը, բազմանկյունը, խողովակը, ծառը* և *աստղը* ձևաստեղծման ամենատարածված բաղկացուցիչներն են: Պարույրը կարևորագույնն է, այն ճկուն է, կոմպակտ, ԴՆԹ-ի մոլեկուլն ունի երկակի պարույրի տեսք: Գունդը, շրջանը, օվալը կոմպոզիցիաներում հեշտ են ընկալվում, քանի որ հիշեցնում են մեր աչքի ձևը: Բազմանկյուն են մեղվի խորիսխները, խողովակը հաղորդակցման միջոց է (մարդու անոթային համակարգը), մարդու անոթային համակարգի և ծառի արմատի ճյուղավորումները նման են, աստղը հիշեցնում է ծառ, եթե նրան նայես վերևից[2]:

Պլատոնն ու Վերածննդի գիտնական Լուկա Պաչոլլին համարում էին, որ չորս տարերքներին համարժեք են երկրաչափական որոշակի ձևերը. Կրակը-բուրգ (տետրաէդր), երկիրը-խորանարդ (գեկսաէդր), օդը-ութանիստ (օկտաէդր), ջուրը-քսանանիստ (իկոսաէդր):

---

[1] **Дмитриева Н.** О прекрасном. Москва, 1960, стр. 56.

[2] **Жемайтис У., Миронов В.** Нужна ли жизни форма // журнал “Знание-сила”, N12, 1979, стр. 16.

Մարդը գիտակցաբար է օգտագործում ծանոթ ձևեր և կառուցվածքներ: Գեղարվեստապատկերային մտածելակերպի արտահայտման նախնադարյան օրինակներում առանձնանում են երկու ձև՝ բնության մեջ հանդիպող բազմապիսի տարրերի վերարտադրման գիտակից և անգիտակից արտացոլման ձևեր:

Մարդու ստեղծագործական գործունեությունն ընթացել է երկու ուղղությամբ՝ մի կողմից նա գծի, գույնի, ծավալի միջոցով պատկերել է իրեն շրջապատող կենդանիներին ու երևույթները, մյուս կողմից վերարտադրել է իր երևակայության պտուղները: Առաջին դեպքում այն հանդես է գալիս որպես «բնական մշակութային տարր»: Օրինակ՝ կամար, շրջան, եռանկյուն ձևերը բազմիցս կարող ենք հանդիպել բնության մեջ(ծիածան, արև և այլն), այսինքն՝ տվյալ ձևերի պատկերումն իմիտատիվ բնույթ ունի: Այս պարզ ձևերն ու դրանց համադրումները վերածվեցին կենցաղում օգտագործվող տարբեր առարկաների և հանդիսացան կոմպոզիցիոն կառուցվածքների ստեղծման առաջին փորձը: Մինչդեռ, օրինակ, շեղանկյան ձև հիշեցնող ժայռապատկերները մարդկային կառուցողական մտածելակերպի արդյունք են: Գեղարվեստական գործունեության այս երկու ձևերն ուղեկցում են մարդուն մինչ օրս՝ մշակույթի զարգացման յուրաքանչյուր փուլում ձեռք բերելով նոր հատկանիշներ:

Հանրաճանաչ փիլիսոփա և գիտնական Պավել Ֆլորենսկին (1882-1937) համարում էր, որ երբ աշխատանքի գործիքները կրկնում են մարդու մարմնի որևէ ֆունկցիոնալ մասի կառուցվածքը, ապա նրա (մարդու) ընդունակություններն առավել չափով են բացահայտվում (մուրճը-բռունցք, մատերը-մանգաղ, սիրտը-պոմպ)[3]:

Բարդը պարզեցնելու փորձ է արել նաև կուբիզմի հիմնադիր Պոլ Սեզանը (1839-1906): «Բնությունը մասնատեք գլանի, կոնի, գնդի և դիտարկեք հեռանկարում այնպես, որ առարկաների յուրաքանչյուր կողմը ուղղված լինի կենտրոնական կետին»,- խորհուրդ է տալիս նկարիչը[4]:

Գերմանացի հանճարեղ գրող Վ.Գյոթեն (1749-1832) իր գրառումներում բազմիցս անդրադարձել է արվեստի խնդիրներին: Նա գտնում էր, որ եթե գեղարվեստական ստեղծագործությունը կառուցված է համաձայն բնության մեջ գործող օրենքների, այն վերածվում է «կրկնակի բնության», այսինքն՝ արվեստի[5]:

---

[3] **Флоренский П.** Органопроекции // журнал “Декоративное искусство”, N12, 1969, стр. 18.

[4] Мастера искусства об искусстве. Москва, 1969, стр. 97.

[5] **Гете В.** Об искусстве. Т. 2, Москва, 1947, стр. 176.

Գերմանացի գրողից դեռևս յոթ դար առաջ նման տեսակետ է հայտնել միջնադարյան Հայաստանի նշանավոր մատենագիր, փիլիսոփա, գիտնական և մանկավարժ Հովհաննես Սարկավագը (1045-1050):

«Կերպարվեստը հայկական կրթարաններում» գրքում կարդում ենք. «Հովհաննես Սարկավագը արվեստի, առաջին հերթին, կերպարվեստի աղբյուրը համարում է բնությունը: Ըստ բանաստեղծի՝ արվեստը որքան մոտենում է բնությանը, այնքան ավելի կատարյալ է լինում: Բնականությունն է արվեստի բարձրագույն վիճակը», - եզրակացրել է միջնադարյան գիտնականը:

Արարչի իրավունքով մարդը իր շուրջը ստեղծում է բնական և հոգևոր պահանջները բավարարող մի նոր աշխարհ, որը բնության և՛ արտացոլանքն է, և՛ շարունակությունը: Արարչագործության մեջ առաջնայինը բնությանը հետևելն է, նրան համահունչ և նրա օրենքներին ձայնակցող հորինվածքներ ստեղծելը, որոնց կարևորագույն հատկանիշը ներդաշնակությունն է:

Ներդաշնակությունը գեղագիտական կատեգորիա է: Նրա նպատակը քաոսի կարգավորումն է: Այն ենթադրում է հակադրությունների (բազմազանների և տարատեսակների) միասնություն: «Ներդաշնակությունը դա անհամատեղելիների միասնությունն է»,- եզրակացրել է Հին աշխարհի փիլիսոփա Փիլոլայը[6]: Անգլիացի ճանաչված նկարիչ, գեղանկարի ազգային դպրոցի հիմնադիր Ուիլիամ Հոգարտը (1697-1764) հիանում էր ալիքվող գծով՝տեսնելով դրա մեջ միավորված բազմազանությունն ու ամբողջականությունը, որը դարձյալ ներդաշնակության հատկանիշներից է: «Գեղեցկությունը բազմազանության մեջ է. միապաղաղությունը ձանձրացնում է»,- գրել է ռուս ճանաչված գեղագետ-արվեստաբան Մ. Ալպատովը[7]:

Տեսողական արվեստներում ներդաշնակությունն արտահայտվում է ռիթմի, սիմետրիայի և ասիմետրիայի, ստատիկայի և դինամիկայի, նույնության և հակադրության, դոմինանտի ու նաև այլ հատկանիշների միջոցով:

Ռիթմի զգացողության ուրույն դրսևորումներով է կազմավորվել XX դարի ֆովիստական ուղղության ներկայացուցիչ ֆրանսացի հանրաճանաչ նկարիչ Անրի Մատիսի արվեստը (1869-1954): «Ինչի մասին եմ երազում, - հարցնում է Մատիսը և պատասխանում, - երազում եմ հավասարակշիռ, մաքուր խաղաղ արվեստի մասին»[8]: Այս խոսքերի հեղինակմ աշխարհի հավա-

---

[6] **Шостаков В.** Гармония как эстетическая категория. Москва, 1973, стр. 13.
[7] **Алпатов М**. Композиция в живописи. Москва, 1940, стр. 43.
[8] **Матисс А.** Сборник статей о творчестве. Москва, 1958, стр. 89.

սարակշռությունը փնտրում է տարբեր ռիթմիկ համադրումներով կառուցված հորինվածքներում: Նրա նկարներում և գեղանկարչական կոմպոզիցիաներում գծերի և գույների երաժշտական ալեձև ռիթմը ստեղծում է թեթև շարժման և անդորրի զգացում: Նկարչի վրձնած «Կարմիր սենյակում» կտավում գունային բծերի մեղմ ռիթմիկ կրկնություններով ֆիգուրները ներհյուսվում են սեղանի ու պատի զարդանախշի կառուցվածքի մեջ ու ստեղծում ներդաշնակության և հավասարակշռության մթնոլորտ:

Խոսելով ներդաշնակության հասնելու այլ պարտադիր պայմանների՝ սիմետրիայի և ասիմետրիայի մասին՝ ասենք, որ օրգանական աշխարհում գոյություն ունի ոչ լիարժեք սիմետրիա՝ կվազիսիմետրիա (մարդու կառուցվածքը): Սիմետրիայի խախտումը գեղարվեստական ստեղծագործությանը հաղորդում է կենդանություն, շարժում: Սիմետրիայի տարբեր տեսակներն արթնացնում են բազմապիսի զգացումներ. հայելատիպը՝ հանգստություն, պտուտակաձևը՝ շարժման պատրանք:

Սիմետրիան կարող է լինել ստատիկ և դինամիկ: Օրինակ՝ սիմետրիկ է և միևնույն ժամանակ դինամիկ պարույրը: Ստատիկ սիմետրիայի հիմքում հնգանկյունն է (ծաղիկի կամ պտուղի կտրվածքը) և քառակուսին (միներալների կազմությունը):

Սիմետրիան կապված է միջինի և ամբողջի գաղափարների հետ: Դրա հիմքում է Արիստոտելի (մ.թ.ա. 384 – 322) հավասարակշռության սկզբունքը: «Միջինը ենթադրում է ծայրահեղության բացակայություն, - ասում է փիլիսոփան ու շարունակում, – հույնը ամեն ինչում գնահատում է ամբողջականությունը և այն միջին դիրքը, որտեղից տեսանելի է ամբողջը: Անտիկ տեսությունը համաչափությունների, սիմետրիայի, ներդաշնակության մասին հնարավոր չէ առանց «միջինի», այն է՝ «չափի զգացումի» հասկացություններից»[9]: Դա է վկայում նաև Դելփիկում Ապոլլոնի մեհյանի մուտքի վրա զետեղված «Ոչինչ չափից ավելի» արտահայտությունը:

Ստատիկ հորինվածքներում տարրերը սովորաբար դասավորվում են հորիզոնական կամ ուղղաձիգ ուղղություններով կամ քիչ են շեղվում դրանցից: Միաժամանակ դրանք (ստատիկ հորինվածքները) միմյանց նման են, համախմբված են ըստ սիմետրիայի օրենքների, ունեն շեշտված կենտրոն և առանցքներ: Սակայն նույնիսկ նման ստատիկ կառուցվածքներում առկա է դինամիկան, քանի որ կոմպոզիցիայի բաղկացուցիչ տարրերն ունեն գունային,

[9] **Аристотель.** Афинская политика. Гос. устройство афинян. Москва, 1937, стр. 174.

տոնային, գծային տարբերություններ, ինչն ինքնին առաջացնում է լարվածություն, այն է՝ շարժման պատրանք:

Ստատիկ կառուցվածքներով են հարուստ գունային բացառիկ զգացողության տեր, հայ արվեստի ինքնատիպ վարպետ Մինաս Ավետիսյանի (1928-1975) վաղ շրջանի ստեղծագործությունները: Այդ գործերին հատուկ են կոմպոզիցիոն պարզ լուծումներ, ապլիկատիվ, հարթ ձևերի ռիթմիկ դասավորություն և դեկորատիվ արտահայտիչ ուժ: Արտաքուստ անշարժ, ստատիկ, բայց հուզականությամբ լի, խորհրդավոր լռությամբ պատված, իրական ժամանակից ու միջավայրից ասես կտրված «Խնոցի», «Հանդիպում», «Երեկոն գյուղում» կտավներն աչքի են ընկնում սիլուետային հստակ ռիթմով ու մեղմ մեղեդայնությամբ:

Դինամիկ ֆիգուրի դասական օրինակ է Հին Հունաստանի քանդակագործ Միրոնի (մ.թ.ա. Vդ.) «Սկավառակաձիգը»: Հեղինակն ընտրել է մարմնի շարժման այն պահը, երբ ակնառու են նետմանը նախորդող և հաջորդող դիրքերը:

Նույնությունը հորինվածքի տարրերի հատկությունների լիարժեք նմանության սկզբունքն է: Ժամանակի շարունակականությունը, դրա ռիթմի միապաղաղ ընթացքը պատկերավորելու նպատակով նկարիչները ստեղծել են կոմպոզիցիոն շարքեր, որտեղ միևնույն մոտիվը ծավալվել է աննշան փոփոխություններով:

Բավական է հիշել ֆրանսիական իմպրեսիոնիզմի փայլուն վարպետ Կլոդ Մոնեի (1840-1920) «Ռուանի տաճարը», «Խոտի դեզը» բնանկարների շարքերը: Բնության անորսալի, փոփոխվող իրավիճակները վրձնելու նպատակով Մոնեն ստեղծում է շարքեր, որտեղ միևնույն պատկերն է՝ նկարված օրվա տարբեր ժամերին: Օգտագործելով գույնի օպտիկական տեղաշարժման օրենքը՝ նա ստեղծել է օդով և լույսով թափանցված, գույների շողացող փայլով ողողված հավերժ նորացվող բնության պատկերներ:

Դոմինանտը հորինվածքներում կատարում է իմաստային կենտրոնի դեր, որի առկայությամբ է պայմանավորվում ողջ ստեղծագործության ընկալումը: Հորինվածքի կենտրոնի կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հարթության տեսողական ընկալման առանձնահատկությունները: Սովորաբար դոմինանտը կառուցվում է հարթության, այսինքն՝ պատկերային դաշտի ակտիվ հատվածում՝ կենտրոնական մասում:

Մարդու տեսողական ապարատը միանշանակ չի ընկալում պատկերային դաշտի բոլոր հատվածները, որի արդյունքում դրանց միայն մի մասն է

գտնվում ուշադրության կենտրոնում: Ընկալվող հատվածներում են տեղակայված «ակտիվ կետերը»: Օրինակ՝ ուղղանկյան ձև ունեցող ֆիգուրի վրա «ակտիվ կետերը» տեղակայված են կենտրոնական առանցքի, անկյունագծերի, մարմնի մեջ ներգծված օվալի եզրագծերի և ոսկե հատման հարաբերությունը հաստատող կետերի վրա: Քառակուսու «ակտիվ կետերը» դրա մեջ ներգծված շրջանի և քառակուսու անկյունագծերի ու նաև վերջինների միմյանց հատումից առաջացած կետերն են: Շրջանում «ակտիվ կետերը» զբաղեցնում են կենտրոնը ու նաև շրջան ներգծված հնգանկյան առանցքներն ու եզրագծերը: Եռանկյան դեպքում «ակտիվ կետերը» կիսորդների (բիսեկտրիսների), բարձրությունների և միջնագծերի հատման տեղերում են[10]:

Պատմանկարչական ժանրի հիմնադիր, հայ կերպարվեստի գրեթե յուրաքանչյուր բնագավառում իր նշանակալից ավանդն ունեցող Վարդգես Սուրենյանցը (1860-1921) արտակարգ արտահայտչականության է հասնում ոչ թե հերոսների հոգեբանական բնութագրման, այլ կոմպոզիցիոն կառուցվածքի, ընդհանուր մթնոլորտի և իրադրության ճշմարտացի վերարտադրման միջոցով: Աստվածաշնչյան թեմաներով նրա ստեղծած «Սալոմե» կտավում գործող ուժը ոչ թե մարդկային բազմությունն է, այլ որքան էլ տարօրինակ հնչի՝ անձուկ լռությունը: Նկարի կոմպոզիցիան շատ պարզ է, բայց և շատ ինքնատիպ ու տպավորիչ. հերոսուհին, այսինքն՝ հորինվածքի դոմինանտը, պատկերված է կենտրոնից փոքր-ինչ աջ: Մարմնին զուգահեռ ներկայացված լայն զարդաշերտն ընդգծում է աղջկա վայելչակազմությունը և հաստատում կոմպոզիցիայի մեջ նրա տեղը: Ուղղահայաց, կարճ ու ընդհատ վրձնահարվածները կտավի ֆակտուրային հաղորդում են թրթիռ, հազիվ նշմարելի ներքին շարժում:

Համաչափություններով է պայմանավորված հորինվածքի բաղադրիչ մասերի ներդաշնակությունը: Ներդաշնակության թվային արտահայտությունը «ոսկե հատման» հարաբերությունն է, որը միաժամանակ կազմված է և՛ թվաբանական, և՛ երկրաչափական համաչափություններից, իսկ հորինվածքի հաջորդական տարրերի հարաբերությունը միշտ միևնույն հաստատուն մեծությունն է, որը հավասար է 0,618 (a:b=b:c=0,618):

«Ոսկե հատման» հարաբերությունը հայտնի էր դեռևս Հին աշխարհում, սակայն այն գործածության մեջ մտցրեց Լեոնարդո դա Վինչին: «Բնության օրինաչափությունները նկարիչը վերածում է համաչափ ձևերի, իսկ գիտնա-

[10] **Волкотруб И.Т**. Основы художественного конструирования. Киев, 1988, стр. 42.

կանը՝ թվերի», - եզրակացրել է հանճարեղ Լեոնարդոն[11]:

Հնգաթև աստղի, հունական Ակրոպոլիսի, Ֆիդիասի արձանների, հունական սափորների, եգիպտական բուրգերի, ուրարտական տաճարների կառուցման հիմքում ոսկե հատման օրենքն է: Համաձայն այդ օրենքի՝ իր ջութակներն է ստեղծել իտալացի հանճարեղ վարպետ Անտոնիո Ստրադիվարիուսը (1644-1737):

Ոսկե համաչափության կարևորության մասին գերմանացի աստղագետ Յոհանես Կեպլերը(1571-1630) գրել է. «Երկրաչափության կարևորագույն գոհարներն են Պյութագորասի (մ.թ.ա. 570 – 490) տեսությունն ու «ոսկե հատման» հարաբերությունը: Առաջինը համեմատելի է ոսկու զանգվածի, երկրորդը՝ թանկարժեք քարի հետ»[12]: Այս համաչափության օգնությամբ կառուցված «Արքիմեդի պարույրը» հաճախ անվանում են «զարգացման կոր» կամ «կյանքի պարույր»:

Գերմանական Վերածննդի վարպետ Ալբրեխտ Դյուրերը (1471-1528) այդ համաչափությունը նկատել է մարդու կազմության մեջ: Դրա ապացույցն է XX դարի ֆրանսացի ականավոր ճարտարապետ Կորբյուզիեի (Շառլ Էդուարդ Ժաններե, 1887-1965) ստեղծած ու մարդու կառուցվածքը կրկնող «Մոդուլոր» կոչվող սխեմատիկ պատկերը: Պատկերի հիմքում ոսկե հատման թվերի շարքն է և մարդու մարմնի չափերը՝ գետնից մինչև արևահյուսակ և դրանից մինչև գլխի կատարի տարածությունների հարաբերակցությունը կրկնում է ոսկե հատման բանաձևի եզրային համաչափությունները[13]:

Մարդը բնության մասնիկն է և ենթարկված է նրանում գործող բոլոր օրենքների ազդեցությանը: Թե՛ օրգանական, թե՛ անօրգանական աշխարհում, բնության թե «կրկնակի բնության» մեջ, այսինքն՝ արվեստում, բարձրագույն արդյունքը ներդաշնակությունն է այն անհասանելի կատարելությունը, որին՝ որպես աստվածային լույսի, իր արարչագործական մաքառումներում ձգտում է մարդը:

---

[11] **Леонардо да Винчи.** Избранные произведения. Т. 1, Москва-Ленинград, 1935, стр. 215.

[12] **Окстер Е.М.** Введение в геометрию. Москва, 1966, стр. 236.

[13] **Ле Корбюзье.** Архитектура 20 века. Москва, 1977, стр. 291.

ОСОБЕННОСТИ ГАРМОНИЧНЫХ ПОСТРОЕНИЙ

САТЕНИК МЕЛИКЯН

Для создания новых композиционных построений человек с древнейших времен и по сей день сознательно использует знакомые формы и схемы. В формотворчестве он старается черпать из бездонного кладезя природы, пытается следовать ее законам и быть созвучным с ней. Определяющим качеством совершенства композиции является слаженность и гармоничность компонентов, создающих целостность формы. В визуальных искусствах гармония, как высшее проявление совершенства, выражается в сооотношениях золотого сечения и предполагает наличие необходимых средств формообразования - ритм, симметрия, ассиметрия, статика, динамика, контраст, нюанс, доминанта.

Ключевые слова - композиционные построения, гармония, совершенство, золотое сечение, средства формообразования, ритм, симметрия, ассиметрия, статика, динамика, контраст, нюанс, доминанта.

THE SINGULARITIES OF HARMONIOUS BUILDINGS

SADENIK MELIKYAN

The primary key to creativity is to follow the laws of nature. While creating setups it is necessary that they be in consonance with nature and in line with its laws. Their most distinctive feature is harmony. In visual arts, harmony is expressed through the proportion of golden ratio, rhythm, symmetry, asymmetry, statics, dynamics, identity, contrast, dominant and other features as well.

Key words – Composite construction, harmony, perfections, golden ratio, means of shaping, rhythm, symmetry, asymmetry, statics, dynamics, identity, contrast, dominant.